

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-33>

ՀԵՆՐԻԿ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական,
Երևանի պետական համալսարանի քաղաքացիական
դատավարության ամբիոնի դասախոս,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

HENRIK KHUNDKARYAN
*Assistant to the Judge of the Court of Cassation of the RA,
Lecturer at the Chair of Civil Procedure of Yerevan State University,
PhD Student at the Chair of Civil Procedure, Faculty of Law, Yerevan State University*

ГЕНРИХ ХУНДКАРЯН
*Помощник судьи Кассационного суда РА,
Преподаватель кафедры гражданского судопроизводства
Ереванского государственного университета,
Аспирант кафедры гражданского судопроизводства
Юридического факультета Ереванского государственного университета
ORCID' <https://orcid.org/0000-0002-9335-1007>*

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԱՅՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

JURISDICTION OVER DISPUTES RELATED TO ENTERING PUBLIC SERVICE, PERFORMING IT, AND DISMISSAL FROM SERVICE

ПОДВЕДОМСТВЕННОСТЬ РАЗНОГЛАСИЙ ПРИ ПОСТУПЛЕНИИ НА ГОСУДАРСТВЕННУЮ СЛУЖБУ, ЕЁ ИСПОЛНЕНИИ И ОСВОБОЖДЕНИИ ОТ СЛУЖБЫ

Ներածություն

Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները, հիմքում ունենալով սահմանադրական առանձին նորմերով երաշխավորված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու և աշխատանքի ազատ ընտրության իրավունքները, ունեն երկակի կարգավիճակ: Այդ իսկ պատճառով դատական պաշտպանության տեսանկյունից տվյալ հարաբե-

րությունների շրջանակում ծագող տարածայնությունների լուծման գործընթացում խնդրահարույց է որոշել տվյալ վեճերի առարկայական ընդդատությունը (ենթակայությունը):

Սույն հոդվածով իրականացվող հետազոտման նպատակն է բացահայտել հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների բնույթը և տվյալ հարաբերությունների շրջանակում ընդունվող անհատական իրավական ակտերի բնույթը:

Նշված նպատակին հասնելու ուղղությամբ սույն աշխատանքում խնդիր է դրվել՝

(i) Դիտարկել 02.05.2024 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունավետությունը,

(ii) բացահայտել արդյո՞ք հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերություններն ունեն հանրային բնույթ, և արդյո՞ք տվյալ հարաբերությունների շրջանակում ընդունվող անհատական իրավական ակտերը վարչական ակտ են, թե՞ ոչ:

Կատարվող աշխատանքի համար մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գիտական ճանաչողությանը հայտնի՝ համեմատաիրավական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական վերլուծական, անալիզ, սինթեզ և այլ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

Անձի խախտված իրավունքների պաշտպանության ամենաարդյունավետ միջոցը դատական պաշտպանությունն է: Դրան համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության¹ 61-րդ հոդվածը յուրաքանչյուրին վերապահում է իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Դատական պաշտպանության իրավունքի իրացման առաջնային նախադրյալն օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի գիմելու իրավունքն է: Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման երաշխիք, չի նախատեսում «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի գիմելու իրավունքը», սակայն այն իր ամրագրումն է ստացել ինչպես մի շարք հիմնարար միջազգային իրավական ակտերում (օրինակ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի² 6-րդ հոդվածում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի³ 14-րդ հոդվածում), այնպես էլ «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի⁴ 8-րդ հոդվածում:

Դատական պաշտպանության իրավունքի իրացման տեսանկյունից խիստ արժևորվում են ընդդատության կանոնները: Այս առիթով ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը⁵: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, իր հերթին, ցույց է տալիս, որ վերջինս Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» բաղկացուցիչ տարրն է

¹ Ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

² Ընդունվել է 04.11.1950 թ., ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:

³ Ընդունվել է 16.12.1966 թ., ուժի մեջ է մտել 23.03.1976 թ., ՀՀՊՏ 1997.12.25/29:

⁴ Ընդունվել է 07.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ., ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ. 143:

⁵ Տե՛ս Սահմանադրական դատարանի 03.02.2009 թ. թիվ ՍԴՈ-787 որոշումը:

համարում ընդդատության կանոնների պահպանվածությունը⁶: Փաստորեն, ընդդատության կանոններն ուղղված են «օրենքի հիման վրա ստեղծված դատարան դիմելու», իսկ վերջնարդյունքում՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման ապահովմանը: Թերևս, այս հանգամանքով պայմանավորված՝ ճյուղային դատավարական բոլոր օրենքներով ընդդատության կանոնների խախտումը հանգեցնում է դատական ակտի անվերապահ բեկանման, քանի որ այդպիսի խախտումն ինքնին անհամատեղելի է անձանց դատական պաշտպանության և արդար դատաքնության իրավունքների հետ:

Դատավարագիտության մեջ ընդդատության կամ ենթակայության կանոնները բնութագրվում են որպես կողմնորոշիչ սկզբունքներ, որոնց հաշվառմամբ օրենսդիրը լուծում է պետության յուրիսդիկցիոն համակարգը կազմող մարմինների, ինչպես նաև տարբեր իրավասության դատարանների միջև գործերի բաշխման հարցը⁷: ՀՀ վարչական դատարանի և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների ընդդատությանը վերապահված գործերի սահմանազատման չափանիշները մանրամասնորեն կարգավորվել են ճյուղային դատավարական օրենքներով: Այսպես. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի⁸ 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի⁹ 10-րդ հոդվածն, իր հերթին, սահմանում է, որ Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...): Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

Չնայած դատավարական օրենսդրությամբ առկա եզրութաբանական տարբերություններին՝ հիշատակված կարգավորումների համադրումը ցույց է տալիս, որ ՀՀ վարչական դատարանին և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի սահմանազատման հարցում օրենսդիրը որպես ելակետ ընդունել է վիճելի իրավահարաբերության բնույթը: Այլ խոսքով, եթե խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքը կամ օրինական շահը բխում է հանրային իրավահարաբերությունից, ապա դրա պաշտպանությունը կարող է իրականացվել վարչական դատավարության կարգով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունների հաշվառմամբ), իսկ մասնավոր իրավահարաբերությունից բխող վեճն օրենսդիրը վերապահել է

⁶ Տե՛ս, օրինակ, European court of Human rights, case of RICHERT v. POLAND, applications no. 54809/07, judgement of 25 October 2011, paragraph 41:

⁷ Տե՛ս Մեղրյան Ս. Գ., Քաղաքացիական և վարչական գործերի դատական ենթակայությունը որոշելու չափանիշները, Պետություն և իրավունք, թիվ 2 (48), Երևան, 2010, էջ 30, http://www.old.yso.am/files/Sergey_Meghryan2010.pdf 31.01.2025:

⁸ Ընդունվել է 09.02.2018թ., ուժի մեջ է մտել 09.04.2018թ., ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ. 208:

⁹ Ընդունվել է 05.12.2013թ., ուժի մեջ է մտել 07.01.2014թ., ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ. 1186.1:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին:

Հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 02.05.2024 թվականի ՀՕ-220-Ն և ՀՕ-222-Ն օրենքների ուժով հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերն այլևս ընդդատյա չեն ՀՀ վարչական դատարանին, և դրանց քննությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ հայցային վարույթի շրջանակներում: Նման պայմաններում մի կողմից հանրային իրավահարաբերություններից բխող բոլոր վեճերն առանց որևէ նախապայմանի վերապահված են ՀՀ վարչական դատարանի ընդդատյա, մյուս կողմից՝ հանրային ծառայության հետ կապված վեճերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով, այլևս համարվում են հատուկ հայցային վարույթի կարգով քննվող աշխատանքային վեճեր: Իսկ արդյո՞ք արդարացված է այս մոտեցումը՝ հաշվի առնելով ՀՀ վարչական դատարանին և առաջին ատյանի դատարաններին ընդդատյա գործերի սահմանազատումը վիճելի իրավահարաբերության բնույթով պայմանավորելու օրենսդրի կամքը: Այս հարցադրմանը պատասխանելու համար անհրաժեշտ է վեր հանել հանրային իրավահարաբերությունների բնութագրիչ հատկանիշները:

Հանրային և մասնավոր իրավունքների սահմանազատման հարցը դոկտրինալ մակարդակում երկար տարիներ քննարկման առարկա է դարձվել¹⁰: Ընդհանուր առմամբ՝ հանրային իրավունքը կառուցված է ենթակա սուբյեկտների գործունեության սուբորդինացիայի սկզբունքի հիման վրա՝ ուղղված հանրային շահերի կենսագործմանը¹¹: Ինչ վերաբերում է մասնավոր իրավունքին, ապա այստեղ սուբորդինացիայի սկզբունքը ելակետ չէ: Մասնավոր իրավունքը բնութագրվում է որպես իրավանորմերի ամբողջություն, որը հասարակական հարաբերությունների կարգավորման մասնավոր, իսկ, երբեմն, նաև հանրային մեթոդների հիման վրա կարգավորում է գույքային ինքնուրույնություն ունեցող, ֆորմալ առումով իրավահավասար սուբյեկտների կամահայտնությամբ առաջացող գույքային և ոչ գույքային, ինչպես նաև դրանց հետ կապված կազմակերպակառավարչական հարաբերությունները¹²:

Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ծավալուն անդրադարձ է կատարել ՀՀ Վճռաբեկ դատարանը: Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորու-

¹⁰ Առավել մանրամասն տե՛ս Актуальные проблемы гражданского права, монография, под ред. *Р.В. Шагеевой и Н. Н. Косаренко*, РААН, М., 2017, էջեր 7-16, <https://raa.ru/new/new2.pdf> 31.01.2025:

¹¹ Տե՛ս Гражданское право, учебник в 4 т., том III, 3-е изд., перераб. и доп., отв. ред. *Суханов Е.А.*, Москва, Статут, 2023, էջ 34:

¹² Տե՛ս *Ավետիսյան Վ.*, Մասնավոր իրավունքի զարգացման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» № 3 (30), Երևան, 2019, էջ 55, http://www.old.y-su.am/files/07_V_Avetisyan.pdf 31.01.2025:

թյունների իրականացման պարտականությունը, թե ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե ոչ:

Վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը¹³: Փաստորեն, ՀՀ Վճռաբեկ դատարանը հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատումը պայմանավորել է իրավահարաբերության բոլոր տարրերով՝ սուբյեկտով, օբյեկտով և բովանդակությամբ: Մեկ այլ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում:

Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին:

Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են վերադասության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ:

Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ¹⁴:

Այսպիսով՝ եթե ամբողջացնենք տեսական գրականության մեջ և դատական պրակտիկայում արտահայտված դիրքորոշումները, կարող ենք տալ հանրային իրավահարաբերության հետևյալ սահմանումը. հանրային իրավահարաբերությունները հանրային իշխանության մարմինների պարտադիր մասնակցությամբ և սուբորդինացիայի սկզբունքի հիման վրա առաջացող այն հարաբերություններն են, որոնք ուղղված են հանրային շահի կենսագործմանը: Տեղայնացնելով հիշյալ հատկանիշները հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների վրա՝ եզրահանգում ենք.

1. Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների կողմերից մեկը հանրային իշխանության մարմինն է, որի գործունեությունն ուղղակիորեն կարգավորված է օրենքով, և

¹³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 22.04.2016 թ. որոշումը:

¹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով 13.04.2022 թ. որոշումը:

որը գործում է օրենքով կանխորոշված լիազորությունների շրջանակներում: Այլ խոսքով, եթե քաղաքացիական շրջանառության ընթացքում առաջացող աշխատանքային իրավահարաբերությունների մասնակիցներն ազատ են անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին, ապա հանրային ծառայության կապակցությամբ առաջացող հարաբերությունների կողմերից մեկը, իր կարգավիճակով պայմանավորված, այդպիսի ազատությամբ օժտված չէ:

2. Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները սուբորդինացիոն բնույթ ունեն: Վերջին հանգամանքը ենթադրում է, որ այս հարաբերության մասնակիցները գտնվում են վերադաս-ենթակա փոխգործակցության մեջ, քանի որ հիշյալ հարաբերությունների կողմ հանդիսացող հանրային իշխանության մարմինն ունի հարաբերության մյուս կողմի՝ հանրային ծառայողի համար պարտադիր որոշումներ ընդունելու հնարավորություն՝ կրկին իր իրավական կարգավիճակով պայմանավորված: Ընդ որում, այսպիսի սուբորդինացիայի հիմնական նպատակը հանրային իշխանության մարմինների կողմից իրենց հանրային պարտականությունների կատարման ապահովումն է:

Բայցևայնպես, մեր գնահատմամբ, նշված երկու հատկանիշները դեռևս բավարար չեն հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները հանրային իրավունքի բնագավառին դասելու համար. որոշիչ նշանակություն ունի այն հանգամանքը, թե ինչպիսի շահերի կապակցությամբ են առաջանում նշված հարաբերությունները:

3. Քննարկվող իրավահարաբերություններն ուղղված են հանրային շահի իրացմանը: Այսպես. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի¹⁵ 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Այսինքն՝ հանրային ծառայությունն այն ինստիտուտներից մեկն է, որի միջոցով պետությունն ապահովում է իր հանրային իշխանության իրականացումը: Տեսական գրականության մեջ հանրային ծառայությունը բնութագրվում է որպես պետության (հանրային իշխանության մարմինների) և քաղաքացու միջև ծագող հանրային-իրավական բնույթի հասարակական հարաբերությունների (վարչակառավարչական գործընթացների) ամբողջություն, որը միտված է օրենսդրությամբ նախանշված կարգով ու շրջանակում պետության (հանրային իշխանության մարմինների) քաղաքականության իրականացմանը¹⁶: Հանրային ծառայության՝ որպես ինքնուրույն իրավական ինստիտուտի, այսպիսի կարգավիճակով պայմանավորված ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածը յուրաքանչյուր քաղաքացու վերապահում է ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք:

Փաստորեն, սահմանադիրն աշխատանքի ազատ ընտրության իրավունքից զատ՝ հռչակել է նաև հանրային ծառայության անցնելու յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը: Նման հանգամանքն ընդգծում է, որ հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացման կապակցությամբ առաջացող հարաբերությունները սոսկ աշխատանքային հարաբերություններ չեն, հակառակ դեպքում իմաստազրկվում է հանրային ծառայության անցնելու իրավունքը

¹⁵ Ընդունվել է 23.03.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ., ՀՀՊՏ 2018.03.29/24(1382) Հոդ.399:

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 347 <https://www.osce.org/files/documents/8/0/74940.pdf> (31.01.2025):

սահմանադրական առանձին նորմով նախատեսելու սահմանադրի մոտեցումը: Այլ խոսքով՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքից զատ՝ առանձին նորմով հանրային ծառայության անցնելու իրավունքի ամրագրմամբ՝ սահմանադիրը քննարկվող իրավունքին և դրա կապակցությամբ առաջացող հարաբերություններին հաղորդել է հատուկ նշանակություն: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ պետության կառավարմանը մասնակցելու յուրաքանչյուր քաղաքացու հնարավորությունն ապահովելու նպատակով հիշյալ գլխում ամրագրվել են որոշակի իրավունքներ, որոնց թվին են դասվում ընտրական, հանրաքվեին մասնակցելու, հանրագիր ներկայացնելու և հանրային ծառայության անցնելու իրավունքները:

Նկատի ունենալով, որ, ի թիվս այլնի, ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու միջոցով է, որ ապահովվում է պետության կառավարմանը մասնակցելու յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության մակարդակով հանրային ծառայության անցնելու իրավունքի ամրագրումն, ըստ էության, ուղղված է ժողովրդաիշխանության սկզբունքի կենսագործմանը: Անդրադառնալով հանրային ծառայության անցնելու իրավունքի բովանդակությանը՝ ՀՀ Սահմանադրական դատարանն, իր հերթին, արձանագրել է, որ հանրային ծառայության անցնելու իրավունքը՝ որպես ժողովրդավարական իշխանության իրացման յուրօրինակ դրսևորում, մի կողմից՝ իրավական և ժողովրդավարական պետության քաղաքացու՝ պետական կառավարման ոլորտում հանրային ծառայության՝ օրենքով նախատեսված կարգով և պայմաններով անցնելու հնարավորության ապահովման երաշխիք է: Մյուս կողմից՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ոչ միայն մասնակցում է օրենքով նախանշված կարգով և պայմաններով հանրային իշխանության մարմինների քաղաքականության իրականացմանը, այլև հնարավորություն է ունենում հանրային ծառայության ոլորտում ծավալելու աշխատանքային գործունեություն՝ իր մասնագիտական գիտելիքներին և կարողություններին համապատասխան¹⁷:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները, հիմքում ունենալով սահմանադրական առանձին նորմերով երաշխավորված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու և աշխատանքի ազատ ընտրության իրավունքները, ունեն երկակի կարգավիճակ: Դրանք մի կողմից աշխատանքային հարաբերություններ են, որոնք առաջանում են քաղաքացիների և կոնկրետ պետական մարմինների միջև, իսկ մյուս կողմից՝ հարաբերություններ են, որոնք առաջանում են քաղաքացիների և ողջ հանրային իշխանության միջև՝ ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածով երաշխավորված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքը երաշխավորելու հանրային իշխանության պարտականությամբ պայմանավորված: Հետևում է, որ եթե սովորական քաղաքացիական շրջանառության ընթացքում առաջացող աշխատանքային իրավահարաբերության կողմերը հետապնդում են սեփական մասնավոր շահերը (գործատուն հետապնդում է իր ցանկալի աշխատանքը ստանալու նպատակ, իսկ աշխատողը՝ դրա դիմաց վարձատրվելու նպատակ), ապա հանրային ծառայության հետ կապված իրավահարաբերություններում միջնորդավորված կերպով իրացվում է պետության կառավարմանը մասնակցելու քաղաքացու իրավունքը, իսկ վերջնարդյունքում՝ ժողովրդաիշխանության սկզբունքը: Իսկ վերջին հանգամանքը վկայում է հանրային ծառայության հետ

¹⁷ Տե՛ս Սահմանադրական դատարանի 21.11.2023 թ. թիվ ՍԴՈ-1704 որոշումը:

կապված հարաբերություններում հանրային շահի սպասարկման առաքելության մասին: Մեր գնահատմամբ՝ չի կարող լինել ավելի ցայտուն ցուցիչ հանրային շահի առկայության մասին, քան ժողովրդաիշխանության իրացման պահանջն է:

Շարադրվածի լույսի ներքո կարող ենք արձանագրել, որ հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող հարաբերությունները բավարարում են իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Նման պայմաններում խիստ մտահոգիչ է հիշյալ հարաբերությունները առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների ընդդատությանը (ենթակայությանը) վերապահելը, քանի որ այդ դեպքում խախտվում է այն կոնցեպտուալ տրամաբանությունը, որն ընկած է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի հիմքում: Խնդրո առարկա վեճերով դիմելով դատարան՝ անձը հայցում է ոչ միայն իր աշխատանքային իրավունքների, այլև հանրային ծառայության անցնելու իրավունքի պաշտպանություն, որն էլ կանխորոշում է այսպիսի վեճերի հանրային-իրավական բնույթը և ընդդատությունը ՀՀ վարչական դատարանին: Հետևաբար՝ գտնում ենք, որ հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու և ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող վեճերը պետք է ընդդատյա լինեն ՀՀ վարչական դատարանին, և մեր օրենսդրի որդեգրած նոր մոտեցումն այդքան էլ արդարացված չէ:

Ընդդատյա լինելով ՀՀ վարչական դատարանին՝ հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը պետք է քննվեն որոշակի հայցատեսակի շրջանակում: Ներկայում իրավագիտական հանրությամբ միանշանակ չէ այն հարցի պատասխանը, թե որ հայցատեսակի միջոցով պետք է իրականացվի հիշյալ վեճերով հայցվորի իրավունքների պաշտպանությունը: Խնդիրն այն է, որ երկար տարիներ հանրային ծառայության հետ կապված վեճերը քննվում էին վիճարկման հայցի ռեժիմով, որպիսի պայմաններում միանշանակ չէ, թե արդյո՞ք հանրային ծառայողի իրավունքներին միջամտող անհատական իրավական ակտը վարչական ակտ է՝ հաշվի առնելով, որ վիճարկման հայցի նյութական օբյեկտը հենց վարչական ակտն է: Այս առնչությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու գործընթացում հանրային ծառայողի վերաբերյալ ընդունվող անհատական իրավական ակտը չի հանդիսանում վարչական ակտ՝ առնվազն վարչական ակտին բնորոշ արտաքին ներգործության հանգամանքի բացակայությամբ պայմանավորված: Մասնավորապես՝ նշված հարաբերություններում գործատուն աշխատողի նկատմամբ հանդես չի գալիս որպես վարչական մարմին, հետևապես աշխատողի նկատմամբ չի իրականացնում վարչարարություն, որպիսի իրողությունից էլ օբյեկտիվորեն բխում է, որ հանրային ծառայությունից ազատելու կամ հանրային ծառայության ընդունելու, ինչպես նաև հանրային ծառայության իրականացման ընթացքում համապատասխան աշխատողի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործատուի ընդունած իրավական ակտերը չեն կարող որակվել վարչական ակտեր¹⁸: Բայցևայնպես, ղեկավարվելով դատարանի մատչելիության իրավունքի իրացման անհրաժեշտությամբ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հիշյալ վեճերը կարող են քննվել միայն վիճարկման հայցի շրջանակում¹⁹: Քննարկվող վեճերով հայցվորի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ հայցատեսակը որոշելու

¹⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6397/05/23 վարչական գործով 24.05.2024 թ. որոշումը:

¹⁹ Տե՛ս նույն որոշումը:

նպատակով անհրաժեշտ ենք համարում վեր հանել վարչական ակտի հատկանիշները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի²⁰ 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նշված հոդվածի սահմանումից կարող ենք առանձնացնել վարչական ակտի հետևյալ հատկանիշները՝

1. վարչական ակտն անհատական իրավական ակտ է,
2. վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի կողմից կոնկրետ գործի կարգավորման նպատակով,
3. վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում,
4. վարչական ակտն ուղղված է հասցեատիրոջ համար իրավական հետևանքներ առաջացնելուն,
5. վարչական ակտն օժտված է արտաքին ներգործությամբ:

Եթե հանրային ծառայողի իրավունքներին միջամտող անհատական իրավական ակտի առաջին չորս հատկանիշներին բավարարելը կասկած չի հարուցում, ապա նույնը չենք կարող ասել վերջին հատկանիշի մասին: Վարչական ակտի արտաքին ներգործության հատկանիշը ենթադրում է, որ վարչական ակտի հասցեատերը և վարչական մարմինը չպետք է գտնվեն ներքին ենթակայական հարաբերությունների մեջ: Այլ կերպ ասած, վարչական ակտի հասցեատերերը վարչական մարմնի համար պետք է լինեն մասնավոր անձինք, այսինքն՝ հանրային սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կրողներ²¹:

Ինչպես նշեցինք վերոգրյալում, հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերություններն ունեն երկակի կարգավիճակ: Ասվածն ուղղակիորեն վկայում է հանրային ծառայողի երկակի կարգավիճակի մասին. վերջինս նախ հանդես է գալիս աշխատողի կարգավիճակով կոնկրետ պետական մարմնի հետ հարաբերություններում և միաժամանակ ունի հանրային սուբյեկտիվ իրավունքի կրողի կարգավիճակ, որի իրավունքների ապահովման պարտականությունը կրում է իրավահարաբերության մյուս կողմը՝ հանրային իշխանությունը: Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ ընդունվող իրավական ակտերի արտաքին ներգործություն ունենալու հանգամանքի քննարկման շրջանակում կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Եվրոպական միության իրավական համակարգում առկա որոշ ելակետային դրույթների:

Այսպես՝ «մտահոգության սկզբունքը» (“the principle of solicitude”) համարվում է Եվրոպական միության իրավական համակարգում պատշաճ վարչարարության իրավունքի՝ «հոգատարության սկզբունքի» հետ առնչվող կարևոր բաղադրատարր, որը հանգում է վարչական մարմինների կողմից իրենց պաշտոնատար անձանց բարեկեցության, շահերի և իրավահավասարության ապահովման պարտականությանը: «Մտահոգության սկզբունքի» էությունն այն է, որ վարչական մարմնի կողմից իր իսկ պաշտոնատար անձանց վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է քննարկման առարկա դարձվեն այն բոլոր գործոնները, որոնք կարող են ազդել այդ որոշման վրա՝ հաշվի առնելով ոչ միայն հանրային ծառայության, այլ նաև միայն

²⁰ Ընդունվել է 18.02.2004 թ., ուժի մեջ է մտել 31.12.2004 թ., ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

²¹ Տե՛ս Հ. Թովմասյան, Օ. Լուխթերիանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել, Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, Երևան, Բավիդ, 2011, էջ 239:

տվյալ հանրային ծառայողի շահերը: Այս իմաստով «մտահոգության սկզբունքը» հանդիսանում է պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչներից մեկը՝ վարչական մարմիններին պարտավորեցնելով պահպանել նշված հիմնարար իրավունքի երաշխիքները նաև հանրային ծառայողների նկատմամբ որոշումներ ընդունելու գործընթացում²², քանզի պատշաճ վարչարարության իրավունքը անձի սահմանադրական իրավունքներից է և ուղղված է անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը: Հանրային ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կարող է համարվել վարչական ակտ, եթե տվյալ հարցը մեկնաբանվի հետևյալ տեսանկյունից. օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու և (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու և (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը: Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ խիստ կարգապահական տույժերն են՝ (...) բ) հիմնական աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը, (...): Այս նորմի ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ այս կարգապահական տույժը ազդում է անձի սուբյեկտիվ իրավունքների վրա, քանզի ազդում է անձի սեփականության իրավունքի վրա, և այդ պարագայում հանրային ծառայողը և վարչական մարմինը գտնվում են ենթակարգության հարաբերություններում, և այստեղ արդեն ապահովվում է արտաքին ներգործության հատկանիշի առկայությունը: Նաև գտնում ենք, որ հանրային ծառայությունից ազատելու վերաբերյալ որոշումը համարվում է նույնպես վարչական ակտ, քանզի կրկին ազդում է անձի սուբյեկտիվ իրավունքների վրա: Տվյալ իրավահարաբերություններում կրկին առկա է ենթակարգության ինստիտուտը: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ հանրային ծառայության անցնելու, հանրային ծառայողին կարգապահական պատասխանատվության (տույժ) ենթարկելու մասին որոշումը և հանրային ծառայությունից ազատելու վերաբերյալ որոշումը համարվում են հիմնականում վարչական ակտեր, քանի որ դրանք ուղղակիորեն ներգործում են սուբյեկտիվ իրավունքի կրողի՝ հանրային ծառայության և այլ իրավունքներին և դրանով իսկ օժտված են արտաքին ներգործությամբ, և անձը կարող է դիմել վարչական դատարան վիճարկման հայցով՝ անվավեր ճանաչելու (վերացնելու) տվյալ անհատական իրավական ակտերը:

Մինչդեռ հանրային ծառայության իրականացման ընթացքում ընդունվող անհատական իրավական ակտերը ոչ միշտ է, որ միջամտում են անձի սուբյեկտիվ իրավունքին: Որպես օրինակ կարող են հանդիսանալ քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական մի շարք տույժեր կիրառելու մասին որոշումները (նախազգուշացում, նկատողություն և այլն): Նկարագրված իրավիճակներում քաղաքացիական ծառայողը հանդես չի գալիս մասնավոր անձի՝ հանրային սուբյեկտիվ իրավունքի կրողի կարգավիճակով, ուստիև նրա իրավունքներին միջամտող անհատական իրավական ակտն այս դեպքում օժտված չէ արտաքին ներգործությամբ: Ասվածի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ հանրային ծառայության հետ կապված վեճերով վիճարկվող անհատական իրավական ակտի վարչական ակտ լինելու հան-

²² Տե՛ս Կարեն Հակոբյան, ««Հոգատարության սկզբունքը»՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Օրինականություն, Երևան, 2018, թիվ 104, էջեր 44-49:

գամանքը կարող է որոշվել յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում, և պրակտիկայում իրապես կարող են լինել դեպքեր, երբ հանրային ծառայության հետ կապված որոշ անհատական իրավական ակտեր բավարարեն վարչական ակտին ներկայացվող պահանջներին, որոշներն էլ օժտված չլինեն արտաքին ներգործությամբ: Այսինքն՝ ներկայում չի կարող լինել ընդհանուր մոտեցում հանրային ծառայողի իրավունքներին միջամտող անհատական իրավական ակտի վարչական ակտ լինելու վերաբերյալ, ինչը, մեր գնահատմամբ, կարող է տարակերպ մեկնաբանությունների տեղիք տալ:

Ստեղծված իրավիճակում խնդրի միակ լուծումը տեսնում ենք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու հետ կապված վեճերով հատուկ վարույթի ներդրմամբ, որը հնարավորություն կտա ապահովելու անձանց դատական պաշտպանության իրավունքը՝ չլեւնալով հանրային ծառայողի իրավունքներին միջամտող անհատական իրավական ակտի բնույթի վրա:

Եզրակացություն

Ամբողջացնելով սույն հոդվածում վկայակոչված իրավական դիրքորոշումերը անհրաժեշտ ենք համարում առանձնացնել հետևյալ եզրահանգումները՝

- Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող հարաբերությունները բավարարում են իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար անհրաժեշտ բոլոր չափանիշներին: Խնդրո առարկա վեճերով դիմելով դատարան՝ անձը հայցում է ոչ միայն իր աշխատանքային իրավունքների, այլև հանրային ծառայության անցնելու իրավունքի պաշտպանություն, որն էլ կանխորոշում է այսպիսի վեճերի հանրային-իրավական բնույթը և ընդդատությունը ՀՀ վարչական դատարանին: Հետևաբար՝ գտնում ենք, որ հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու և ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող վեճերը պետք է ընդդատյա (ենթակա) լինեն ՀՀ վարչական դատարանին, և օրենսդրի որդեգրած նոր մոտեցումն այդքան էլ արդարացված չէ:

- Հանրային ծառայության անցնելու կամ ծառայությունից ազատվելու վերաբերյալ անհատական իրավական ակտերը պետք է դիտարկվեն վարչական ակտեր, քանի որ դրանք ուղղակիորեն ներգործում են սուբյեկտիվ իրավունքի կրողի՝ հանրային ծառայության և այլ իրավունքներին և դրանով իսկ օժտված են արտաքին ներգործությամբ: Ինչ վերաբերում է հանրային ծառայության իրականացման հետ կապված անհատական իրավական ակտերին, ապա գտնում ենք, որ կարգապահական պատասխանատվության (տույժ) ենթարկելու մասին որոշումն այն դեպքերում, երբ միջամտում է անձի սուբյեկտիվ իրավունքին, պետք է դիտարկվի վարչական ակտի հատկանիշներ ունեցող անհատական իրավական ակտ, իսկ մնացած դեպքերում հանրային ծառայության իրականացման հետ կապված անհատական իրավական ակտերը չունեն վարչական ակտի հատկանիշներ:

- Այնուամենայնիվ, քանի որ հանրային ծառայության ոլորտում ոչ բոլոր անհատական իրավական ակտերն են համարվում վարչական ակտեր, անհրաժեշտ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու հետ կապված վեճերով հատուկ վարույթ ներդնել, որը հնարավորություն կտա ապահովելու անձանց դատական պաշտպանության իրավունքը՝ չլեւնալով հանրային ծառայողի իրավունքներին միջամտող անհատական իրավական ակտի բնույթի վրա:

Ամփոփագիր: Հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերություններն ունեն երկակի կարգավիճակ: Այդ իսկ պատճառով խնդրահարույց է տվյալ հարաբերությունների շրջանակում ծագող տարաձայնությունների առարկայական ընդդատության (ենթակայության), ինչպես նաև տվյալ հարաբերությունների շրջանակում ընդունվող անհատական իրավական ակտերի բնույթի պարզումը:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 02.05.2024 թվականի ՀՕ-220-Ն և ՀՕ-222-Ն օրենքների ուժով հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերն այլևս ընդդատյա չեն ՀՀ վարչական դատարանին, և դրանց քննությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ հայցային վարույթի շրջանակում: Մինչդեռ, կատարված աշխատանքի արդյունքում հիմնավորվել է հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների հանրային բնույթ ունենալու հանգամանքը, ինչպես նաև հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու հետ կապված վեճերի քննությունը վարչական դատարանի ընդդատությանը վերապահելու անհրաժեշտությունը, և համապատասխան անհատական իրավական ակտերի որոշ դեպքերում վարչական ակտ հանդիսանալու հանգամանքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային ծառայության ոլորտում ոչ բոլոր անհատական իրավական ակտերն են համարվում վարչական ակտեր, անհրաժեշտ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու կամ ծառայությունից ազատվելու հետ կապված վեճերով հատուկ վարույթ ներդնել, որը հնարավորություն կտա ապահովելու անձանց դատական պաշտպանության իրավունքը՝ չկենտրոնանալով հանրային ծառայողի իրավունքներին միջամտող անհատական իրավական ակտի բնույթի վրա:

Annotation. Legal relations arising in connection with entering, performing or dismissing public service have a dual status. For this reason, it is problematic to clarify the subject matter jurisdiction of disputes arising within the framework of these relations, as well as the nature of individual legal acts adopted within the framework of these relations.

The relevance of the topic is justified by the fact that by virtue of the Laws HO-220-N and HO-222-N of 02.05.2024 “On Amendments and Supplements to the Administrative Procedure Code of the Republic of Armenia” and “On Amendments and Supplements to the Civil Procedure Code of the Republic of Armenia”, disputes related to entering, performing or dismissing public service are no longer within the jurisdiction of the Administrative Court of the Republic of Armenia, and their examination is carried out within the framework of special claim proceedings provided for by the Civil Procedure Code of the Republic of Armenia. Meanwhile, as a result of the work done, the fact that legal relations arising in connection with entering, performing or being dismissed from public service are of a public nature has been substantiated, as well as the need to reserve the examination of disputes related to entering, performing or being dismissed from public service to the jurisdiction of the administrative court, and the fact that in some cases the relevant individual legal acts constitute an administrative act. Taking into account the fact that not all individual legal acts in the public service sector are considered administrative acts, it is necessary to introduce special proceedings in the RA Administrative Procedure Code for disputes related to entering, performing or being dismissed from public service, which will provide an opportunity to ensure the right of individuals to judicial protection without focusing on the nature of the individual legal act interfering with the rights of a public servant.

Аннотация. Правоотношения, связанные с поступлением на государственную службу, её исполнением и освобождением от службы обладают двойственным статусом. По этой причине проблематичным является выяснение предметной подведомственности (подведомственности) разногласий, возникающих в рамках этих отношений, а также характера отдельных правовых актов, принимаемых в рамках этих отношений.

Актуальность темы обоснована тем, что в силу Законов HO-220-N и HO-222-N от 02.05.2024 г. «О внесении изменений и дополнений в Кодекс административного судопроизводства Республики Армения» и «О внесении изменений

и дополнений в Гражданский процессуальный кодекс Республики Армения» споры, связанные с поступлением на общественную службу, ее прохождением и освобождением от службы, более не относятся к подведомственности Административного суда Республики Армения, а их рассмотрение осуществляется в рамках особого искового производства, предусмотренного Гражданским процессуальным кодексом Республики Армения. Между тем, в результате проведенной работы обосновано, что правоотношения, возникающие в связи с прохождением, исполнением и освобождением от общественной службы, носят публичный характер, а также необходимость отнесения рассмотрения споров, связанных с прохождением, осуществлением и освобождением от общественной службы, к компетенции административного суда, а также то, что в ряде случаев соответствующие индивидуальные правовые акты являются административным актом. Учитывая тот факт, что не все индивидуальные правовые акты в сфере государственной службы являются административными актами, необходимо ввести в Кодекс административного судопроизводства РА особое производство по спорам, связанным с прохождением, осуществлением и освобождением от общественной службы, что предоставит возможность обеспечить право лиц на судебную защиту, не акцентируя внимания на характере индивидуального правового акта, ущемляющего права государственного служащего.

Բանալի բառեր - հանրային ծառայություն, իրավահարաբերություն, վարչական դատարան, ընդդատություն, վարչական ակտ:

Keywords: public service, legal relationship, Administrative Court, jurisdiction, administrative act.

Ключевые слова: государственная служба, правоотношение, административный суд, юрисдикция, административный акт.

Օգտագործված գրականության ցանկ

- 1) **Մեղրյան Ս. Գ.**, Քաղաքացիական և վարչական գործերի դատական ենթակայությունը որոշելու չափանիշները, Պետություն և իրավունք, թիվ 2 (48), Երևան, 2010, էջ 30, http://www.old.y su.am/files/Sergey_Meghryan2010.pdf 31.01.2025,
- 2) Актуальные проблемы гражданского права, монография, под ред. **Р.В. Шагиевой** и **Н.Н. Косаренко**, РААН, М., 2017, էջեր 7-16, <https://raa.ru/new/new2.pdf>,
- 3) Гражданское право, учебник в 4 т., том III, 3-е изд., перераб. и доп., отв. ред. **Суханов Е.А.**, Москва, Статут, 2023, էջ 34,
- 4) **Ավետիսյան Վ.**, Մասնավոր իրավունքի զարգացման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» № 3 (30), Երևան, 2019, էջ 55, http://www.old.y su.am/files/07_V_Avetisyan.pdf,
- 5) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Երևան, «Իրավունք», 2010, էջ 347 https://www.osce.org/files/f/documents/8/0/749_40.pdf,
- 6) **Հ. Թովմասյան, Օ. Լուսինյան, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմյան, Ռ. Ռուբեն**, Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, Երևան, Բավիդ, 2011, էջ 239,
- 7) Կարեն Հակոբյան, ««Հոգատարության սկզբունքը»՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Օրինականություն, Երևան, 2018, թիվ 104, էջեր 44-49,
- 8) Սահմանադրական դատարանի 03.02.2009 թ. թիվ ՍԴՈ-787 որոշում,
- 9) Սահմանադրական դատարանի 21.11.2023 թ. թիվ ՍԴՈ-1704 որոշում,
- 10) European court of Human rights, case of **RICHERT v. POLAND**, applications no. 54809/07, judgement of 25 October 2011, paragraph 41,

- 11) Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 22.04.2016 թ. որոշումը,
- 12) Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով 13.04.2022 թ. որոշումը,
- 13) Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6397/05/23 վարչական գործով 24.05.2024 թ. որոշումը:

Խունդկարյան Հ. - ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական, Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, էլիասցե՝ henrik.khundkaryan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 01.04.2025 թ., տրվել է գրախոսության 01.04.2025 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Հովհաննիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.: